ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Ավագ հարկադիր կատարողը՝

1) իրականացնում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը,

2) իրականացնում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործառույթը,

3) իրականացնում է պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու գործառույթը,

4) իրականացնում է պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում,

5) իրականացնում է կատարողական գործողություններ՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի դրույթները,

6) որպես փորձաշրջանի համակարգող, Հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձին օգնում է ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման հարցում, ծանոթացնում այդ գործառույթների արդյունավետ կատարման եղանակներին, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ընթացակարգերին,

7) իր գործառույթներն իրականացնում է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների և պարտականությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է Ծառայության կանոնադրական խնդիրներից և նպատակներից բխող այլ գործառույթներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջներ.

Հարկադիր կատարման ծառայությունում ավագ հարկադիր կատարողի պաշտոնն զբաղեցվում է առանց աշխատանքային ստաժի և փորձի:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: